

### ԼԱՀՈՒՏ ԵՒ ՊԸՐՐԻ ԲՆԱԿԵՑԻՆ ԵՐԿԻՐԸ ՅՈՒՋՈՂ ՀԱՐՑԵՐԸ

Նախագահ գործ. Էմիլ Լահուտ երկ Գաղափարային պայտառի մէջ ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորբի, որուն հետ քննարկեց տեղական ու շրջանային զարգացումները:

Պրորբի նախագահ Լահուտի փոխանցեց խորհրդարանին գոհունակութիւնը՝ անցնալ Կիրակի օր յայտարարուած Լիբանանի մէջ պաղեստինցի գաղթականներու բնակեցումը մերժող եւ անոնց տունդարձի իրաւունքը պահանջող նախագահին կեցումը իր համար, հաղորդեց Ազգային Լրատու Գործակալութիւնը:

Պրորբի հաստատեց, թէ անհրաժեշտ էր դէմ դնել խորայնեան սաղարանքներուն եւ բանակցութիւններու վերականգնման համար գաղթականներու հաշտոյն կատարուած պաղեստինցիներու համաձայնութեան:

Լահուտ եւ Պրորբի մտն գնահատեցին խորհրդարանի նոյնիմաստ կեցումը եւ վերահաստատեցին, թէ Լիբանան կը մերժէ արաբներու հակամարտութեան որեւէ լուծում, որ կը տրուի Լիբանանի ժողովուրդի ապագային իրաւունքներուն հաշտոյն, մասնաւոր որ մտն քայլ նպատակաւ չի կրնար ըլլալ արդար եւ ամբողջական լուծումին, այլ կը ստեղծէ նոր հարց մը, որ ներկայ իրավիճակէն անկէ վտանգաւոր է:

Նախագահ Լահուտ հանդիպումին ընթացքին որոշակի խօսակցութիւններ կատարեցին հարաւոր թանձրեան համար, ընդգծելով կարեւորութիւնը օրկնադիր եւ գործադիր իշխանութիւններու գործակցութեան եւ անոնց միջեւ համակարգումին, մասնաւոր այս պայմաններուն մէջ, ուր անհրաժեշտ է միակամութեամբ դիմագրուել մարտահրաւիրները:

Լահուտ եւ Պրորբի մտն արժարձեցին հարաւոր փոխանակ, մասնաւորաբար շրջանի բարգաւաճման եւ անտեսական կազմակերպման կարիքը: Անոնք մտն խօսակցութեան շրջանի ծխախոտի բերքը արագօրէն գնելու անհրաժեշտութեան մասին:

Շարք՝ էջ 9

### ՔԼԻՆԹԸՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅ ՏԱԳՆԱՊԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԸԱՍԱԶԱՅՆԱԳԻՐԻ ՍԸ ՆԱԽԱԳԻԾԸ

Իսրայէլ երէկ յայտարարեց, թէ Մ. Նահանգներու նախագահ Պիլ Բիլինթըն Ուաշինկթընի մէջ իսրայէլացի եւ պաղեստինցի բանագնացներու ներկայացուցած է 52 տարուան տագնապին վերջ տալու համար հաւանական համաձայնագիրի մը նախագիծը:

Արտաքին գործոց նախարար Շլոմօ Պէն Անի, որ բանագնաց մըն է, իսրայէլեան ձայնասփիւռին յայտարարեց, թէ իսրայէլ կրնայ նախագիծին մէջ նշուած կէտերու մեծամասնութիւնը ընդունիլ, իսրայէլեան բանակցութիւնները նկարագրելով իբրեւ ցարդ «ամէնէն արմատական, խիստ պահուստիւն գործընթացը»:

Բիլինթըն Չորեքշաբթի օր Սպիտակ Տան մէջ տեսակցութիւն ունեցած է երկու կողմերուն հետ՝ պաղեստինցիներու հետ:

Չորեք երէք ամսուան արիւնահեղութեան ծիրի մը մէջ: Նորագոյն բախումներուն ընթացքին, իսրայէլեան ուժերը երէք պաղեստինցիներու սպաննած են Կապալի մէջ, զոհերուն ընդհանուր թիւը բարձրացընելով 336ի՝ մեծամասնութեամբ պաղեստինցիներ:

Ըստ «Ետիոն Սիւր-Նոթ» թերթին, Բիլինթըն Յունուար 10 թիւրախ ճշդած է վեհաժողովի մը, որուն ընթացքին իսրայէլի հրաժարեալ վարչապետ Էհուտ Պարաշ եւ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆատ համաձայնագիր մը պետք է կնքեն:

Սակայն պատասխանելով այն հարցումին, թէ կարելի է այդ թիրախ-թուականը իրականացնել, Մ. Նահանգներու նախագահին պաշտօնէն հեռանալէն 10 օր առաջ,

ՍԵՆՏԵՄԲԵՐ 21

### ԼԻԲԱՆԱՆՑԻ ՍԸ ԵՒ ՊԵՆՏԻՔԱՑԻ ՍԸ ԿԸ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԻՆ

ՏՈՒՊԱՅ, 21 (ՌՈՅԹԸՐԸ).- Մէնուական Արաբիոյ իշխանութիւնները ձեռնարկած են պենտիքացի մը եւ իբրանացի մը՝ բրիտանացի քաղաքացիներու դէմ շարք մը ռմբակոծումներու կապակցութեամբ:

«Հայտարար» օրաթերթը Հինգշաբթի օր հաղորդած է, թէ իբրանացի եւ պենտիքացի ձեռնարկուած են Ռիատի մէջ՝ խումբ մը մարտոց շուրջ բացուած հետաքննութեան ծիրէն ներս: Կան կասկածներ, թէ անոնք ապօրինի առարկաներ մաքսանենգած եւ կանոնք Ս. Արաբիոյ մէջ ծախած են:

Թերթը ըսած է, թէ կասկածելիներէն քանի մը հոգի կրնայ կապ ունենալ Ռիատի եւ իսրայէլի մէջ բրիտանացի քաղաքացիներու դէմ տեղի ունեցած երէք ռմբակոծումներու:

ՄՈՍԿՈՒՍԻՅԻ ՄԷՁ

### ՄԱՐԳՍԵԱՆ ՏԵՍԱԿՑԵՑԱԻ ՌՈՒՍԻՆՈՅ ԵՒ ՊԵՆՏԻՔԱՑԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒՆ ՀԵՏ

ԵՐԵՒԱՆ, 21 (ԱՐՄԷՆՓՐԷՍ).- Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան Հինգշաբթի օր Մոսկուայի մէջ մասնակցեցաւ Անկախ Պետութիւններու Հասարակապետութեան պաշտպանութեան նախարարներու խորհուրդի նիստին:

Նիստին շրջափոխի մէջ նախարար Սարգսեան Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Իկոր Սերկէեւի եւ Պիլիբուրուսիոյ պաշտպանութեան նախարար Ալեքսանտր Չուժաքովի հետ ստորագրեց Հայ-Ռուսական եւ Հայ-պիլիբուրուսական զինուորական գործակցութեան 2001ի ծրագիրները:

Նախարարներ Սարգսեան եւ Սերկէեւ կնքեցին նաեւ Հայաստանի մէջ Ռուսական խորհրդներու եւ անոնց անձնակազմի գործունէութեան վերաբերեալ Համաձայնագիր մը: Ըստ այդ Համաձայնագրի, կը ճշդուին Ռուսական խորհրդներու հրամանատարութեան եւ զինուորներու՝ խորհրդի ղեկը գործունէութիւնը եւ առօրեայ յարաբերութիւնները Հայաստանի պետական, որոնց շարքին՝ զինուորական մարմիններուն հետ:

Շարք՝ էջ 3

### ԹՈՒՐԹԻԱ ՊԵՏՔ Ե ԸՆԴՈՒՆԻ ԻՐ ԹԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Կ'ԸՍԵ ԵԸԼՄԱԶ

Թուրքիոյ փոխ վարչապետ Մետուք Երլմազ Չորեքշաբթի օր յայտարարեց, թէ Թուրքիա պետք է ընդունի իր թերութիւնները եւ լրջօրէն բարեփոխումներու պետք է ձեռնարկէ՝ Եւրոպական Միութեան անդամակցութեան հասնելու համար. բան մը, որ կրնայ տեղի ունենալ 2010 թուականին:

Երլմազի խօսքերը ցուցանիչ էին թրքական աւելի մեղմ կեցումի մը՝ 15 անգամ հաշուող պլոքին հետ շարքներու լարուածութենէ ետք:

Ե. Միութիւնը անցեալ ամիս ճշդած էր քաղաքական եւ տնտեսական բարեկարգումները, որոնց պետք է ձեռնարկէ Թուրքիան, նախքան անդամակցութեան բանակցութեան ցաւալի: Ե. Միութեան այդ փաստաթուղթը դիւանագիտական բանավեճեր եւ Թուրքիոյ կողմէ պլոքին դէմ դա-

ւաճանութեան ամբաստանութիւններու դուր քացած էր:

Թուրքիա վարչապետ էր, որովհետեւ փաստաթուղթը պակասութիւններ կ'ընէր Կիպրոսի եւ Եգիպտոսի ծովուն մէջ հողային կարգ մը հարցերու:

Ե. Միութիւնը կ'ակնկալէ նաեւ, որ Թուրքիա իր մարդկային իրաւանց մարդը բարեխալէ: Այս հարցը այս շաբաթ լուսարձակներու տակ դրուեցաւ առնուազան 19 հոգիի մահէն ետք, երբ Երբեք Չորեքշաբթի օր երկրի տարածքին 20 բանտերու վրայ յարձակած էին:

Երլմազ խոստովանած է, թէ անդամակցութեան գործընթացը

Թուրքիայէն կախեալ է:

Ան կը խօսէր Չորեքշաբթի օր երոպացի գործարարներու, որոնք խորհրդարան կ'այցելէին: «Հերոսութիւնը եւ անիմաստ քաջագործութիւնը մեզ որեւէ տեղ պիտի չհասցնէ», ըսած է ան: «Պիտի ընդունինք մեր թերութիւնները եւ պիտի յայտարարենք, թէ որքան շուտ վերջ պիտի տանք անոնց, եւ ինչպէս վերջ պիտի տանք անոնց՝ առանց վնաս հասցնելու ազգային մեր միասնականութեան եւ առանց հարցեր ստեղծելու մեր սահմանադրական դրութեան համար», յայտարարեց ան:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ԱԶԳԱՅԻՆ ԹԱՂՈՒՄ՝ ԱՐԱ ԵՐԵՒԱՆԵԱՆԻ



Նախարար Թովմանեան շքանշանը կը զետեղէ դագաղին վրայ:

Երէկ՝ Հինգշաբթի, 21 Գեղարքայի առաւօտեան ժամը 11:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ կատարուեցաւ լուսարկաւորութեան արարողութիւնը՝ նախկին երեսփոխան, Կապուսի հանրապետութեան մէջ Լիբանանի նախկին հիւպատոս, Ազգային Կեդրոնական Վարչութեան ատենապետ եւ ազգային բարերար Արա Երեւանեանի, որ մահացած էր Կիրակի, 17 Գեղարքային, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութեան ներկայ գտնուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա., նախագահ գործ. Էմիլ Լահուտի ներկայացուցիչ նախարար Սեպուհ Զոյլանեան, խորհրդարանի նախագահ Նեպիի Պրորբի ներկայացուցիչ երեսփոխան Ատնան Արաքճի, վարչապետ Ռաֆիք Հարիրիի ներկայացուցիչ նախարար Միշէլ Ֆարաճ, նախարար Պշարա Մըրհէժ, երեսփոխաններ Ճորճ Գասարճի, Ժան Օղասապեան, Ալպէր Մուխայէր, Ապտէլ Լաթիֆ Չէյն, Նեպի Լահուտ, Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան, Հայ կաթողիկէ պատրիարքութեան Պէյրութի թեմի ընդհանուր փոխանորդ Վարդան Եպս. Ազգարեան, վեր. Ներսէս Պալապանեան, Հ. Յ. Գ. Բիւրոյի անդամ Երուանդ Փամպուքեան, Ս. Գ. Հ. Կ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ Վահրիճ Ճերէճեան, Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի անդամներ, Ս. Գ. Հ. Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի անդամներ, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արման Նաւասարդեան, Լիբանանի մէջ Քանաւոնի դեսպան Հայկ Սարաֆեան, Լիբանանի նախկին նախագահ Անի Ժեմալյէ, նախկին նախարարներ Արթուր Նապարեան, Սուրէն Խանամիրեան, Շահէ Պարունեան եւ Ժաք Չուխատարեան, նախկին երեսփոխաններ Աբրահամ Տէտէեան, Անդրանիկ Մանուկեան, Պորճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարիւեան, ազգային եւ բարեփոխ-



Արամ Ա. Կ'աղօթէ Գեղարքայի հոգիին համար: (Լուսանկարները՝ Պ. ՉԱՌՈՒԿԵԱՆԻ)

կան միութիւններու ու կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ սգակիր ներկայներ: Եկեղեցական արարողութեան աւարտին հայերէնով եւ արաբերէնով խօսք առաւ Գեղամ Եպս. Խաչերեան, որ դրուատեց հանգուցեալին

Շարք՝ էջ 10

### ԿԱՂԱՆԴԻ ԼԱՄԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՂԱՐՈՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ 25ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ «ԱԶԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ՝


### ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ

Պատմական - վկայակոչական բնոյթի գիրք մը, որ կը ներկայացնէ 1975-1990 լիբանանահայութեան ինքնապաշտպանութեան առօրեան իր զանազան իրեններով: 416 էջ, 11 գլուխ:

- Ազգային եւ քաղաքական փորձառութիւններ
- Արժեւորումներ
- Պատմութեան համար
- Վկայութիւններ եւ վերլուծումներ
- Ուղեւոր կը լինէ՞ք...
- Յիշատակելիները
- Հ. Յ. Գ. եւ հայութեան դէմ ոճիրներ
- Հայրենական արձագանքներ
- Սփիւռքեան արձագանքներ
- Հին օրերու վկայութիւններ նոր օրերու համար
- Թիկունքի աշխատանքները

Ստանալ «Ազգային» գրուելիքներէն եւ հետեւեալ գրախանութիւններէն. — «Համազգային», «Օսրեկացի», «Ոսկեղար», «Ուրջալեան», «Obelisk», «Կոմիտաս», «Շիրակ» եւ «SAVA» (Այնճար): Սակ՝ 15,000 Լ. ու:

### ԱԶԳԱԿ



Պատկերազարդ, ճիշտ բովանդակութիւն, անդրադարձ՝ 2000ի գլխաւոր իրադարձութիւններուն: Յատուկ թղթաձրարներ՝ Հայ Դատի եւ Համաշխարհայնացումի մասին:

### ՏԱԽԱԿՑԱԳԻՐ

Լիբանանում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը խորապես ցանկանում է քաղաքական և ազգային գործիչ Արա Երեւանեանի վաղաժամ մահուան կապակցությամբ:

Արա Երեւանեանի հեռանալը մեծ կորուստ է ոչ միայն հանգուցեալի հարազատներին, այլև՝ հայ համայնքի և Լիբանանի համար:

Յանձնիս Արա Երեւանեանի դեսպանությունը կորցրեց լուսագոյն բարեկամի, անկեղծ և անշահախնդիր հայրենասերի:

Վշտակցում ենք հանգուցեալի ընտանիքին և բոլոր մտերիներին:

**ԴԵՍՊԱՆ ԱՐՄԱՆ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ**  
21-12-2000

### ԴԱՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Արդարության նախարար Սամիր ժըսըր երեկ նախագահեց ժողովի մը, որուն ներկայ գտնուեցան արդարադատության գերագոյն խորհուրդի նախագահ Մուհեյր Հընէյն, ընդհանուր դատախազ Ատնան Ատուտ, դատաւորներու գործունէութեան վերահսկողութեան խորհուրդի նախագահ Թարէք Զիատէ, նահանգային դատախազները եւ քննիչ դատախազները, ինչպէս նաեւ ամբաստանող խորհուրդներու նախագահներն ու նահանգային ատենաներու նախագահները:

Ժողովին քննարկուեցան հետաքննութեանց համար առժամեայ արգելափակումներու հարցն ու նման պատճառով՝ էջ 9

### ՄԱՀԱՉԴ

One Estate Company SAL ընկերութեան տնօրէնութիւնը եւ պաշտօնէութիւնը կը գովեն նախկին երեսփոխան՝

#### ԱՐԱ ԵՐԵՒԱՆԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 17 Դեկտեմբեր 2000ին:

### ՄԱՀԱՉԴ

Տիկին Հուրի Երեւանեան եւ զաւակները՝ Շահէ եւ Սերժ

Տէր եւ տիկին Վահէ Երեւանեան եւ զաւակները  
Տէր եւ տիկին Սարգիս Երեւանեան եւ զաւակները  
Տէր եւ տիկին Յարութիւն Գասարեան եւ զաւակները  
Տէր եւ տիկին Կարապետ Բարսեղեան եւ զաւակները

Երեւանեան ընտանիք  
Տէր Պետրոսեան ընտանիք  
Չալլասեան ընտանիք  
Էմմէքէի ընտանիք  
Քիւլճեան ընտանիք  
Ջառուկեան ընտանիք  
եւ համայն ազգականներ կը գովեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր եւ հարազատին՝

#### ԱՐԱ ԵՐԵՒԱՆԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 17 Դեկտեմբեր 2000ին, երեկոյեան, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Հինգշաբթի, 21 Դեկտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մարտիարոսի մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրըն Շըպպէի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահալի:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, «Երեւանեան» շէնք, թիւ 2 փողոց, Ռապիյէ (ներքին փողոցին յարակից), Ուրբաթ 22 եւ Շաբաթ, 23 Դեկտեմբերին:
- Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ կատարել բարեսիրական հաստատութիւններուն:

### ՄԱՀԱՉԴ

Տիկին Սոնա Յակոբեան եւ զաւակները՝ Բաֆֆի եւ Սազօ

Տէր եւ տիկին Սիմոն Յակոբեան  
Տէր եւ տիկին Սարգիս Պալպանեան  
Տէր եւ տիկին Ռոպէր Խուրի  
Տիար Ստեփան Յակոբեան  
Տէր եւ տիկին Հայկ Պասմաճեան  
Տիար Կարապետ Նաչիկեան  
Տէր եւ տիկին Խառար Ատուրեան  
եւ համայն ազգականներ կը գովեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր եւ հարազատին՝

#### ՆՈՒՊԱՐ ՅԱՎՈՐԵԱՆԻ

մահը:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Հինգշաբթի, 21 Դեկտեմբեր 2000, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Հայաշէնի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ մէջ, էջրեֆիէ, որմէ ետք հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրըն Շըպպէի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահալի:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Էջրեֆիէ, Ուրբաթ 22 եւ Շաբաթ, 23 Դեկտեմբերին:

## ԻՐԱՆ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԿՐ ՅԱՅՏՆԷ ԼԻԲԱՆԱՆԻ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երեկ ընդունեց այցելութիւնը Իրանի դեսպան Մուհամեդ Ալի Սուպհանիի, որ հանդիպումէն ետք յայտարարեց, թէ քննարկած են երկկողմանի յարաբերութիւններն ու շրջանային վարգաճումները, մասնաւորապէս պաղեստինեան ինթիֆա-

#### ԲԱՆՏԱԻՐՈՒՄ

Տէր եւ տիկին Յովիկ եւ Թայիւ Գուլումճեան բախտաւորուած են առջինեկ մանչ պաւակով մը՝

**ՊԱՐԳԵԻ (ՊԱՐՕ)**  
21 Դեկտեմբեր 2000

#### ԾԱԽՈՒ ՀՈՂԱՇԵՐՏ

Սթալլէպի մէջ Ռապիյի կից «Լա Գոլիւն» ակումբի վերեւ, 518 քառ. մէթր, շինարարութեան իրաւունք 30%, գեղատեսիլ դիրք, 225 տոյար քառ. մէթրը:

Հեռ. - 03-660609

#### Կ'ՈՒԶՈՒԻՆ

- JAVA FIRE PROTECTION հաստատութիւնը կարիքը ունի շուկայի վրայ ծախող երիտասարդներու, պաշարօրէյի վկայականով, արաբերէն եւ անգլերէն գիտնալը պայման: Հեռ. 01-502329, կէսօրէ առաջ ժամը 10:00էն մինչեւ ժամը 2:00:
- Քարուղարուի մը, որ գիտնայ համակարգիչ գործածել եւ անգլերէն լսելու: Հեռաձայնը՝ 01-242549 եւ 01-263631 թիւերուն:

տան:

Սուպհանի ըսաւ, որ վարչապետին վերահաստատած է Իրանի Կօրակցութիւնը՝ Լիբանանի, ընդդէմ իսրայէլեան սպառնալիքներուն եւ ոտնձգութիւններուն: «Վարչապետ Հարիրի մէկ վստահեցուց, որ հակառակ իսրայէլեան սպառնալիքներուն ստեղծած դժուարութիւններուն, կառավարութիւնը պիտի շարունակէ իր ստեղծած եւ բարգաւաճման քաղաքականութիւնները եւ հաստատած է պաղեստինցի պաղարկաններու տունդարձի իրաւունքի ճանաչման անհրաժեշտութիւնը: Առանց այս տունդարձի կարելի չէ շրջանին մէջ խաղաղութիւն կամ կայունութիւն հաստատել», ըսաւ ան:

Իրանի դեսպանը Հարիրիէն պահանջեց, որ արդէն բացուած «անհետացածներու» թրջածարին մէջ նկատի առնուի 1982ին Լիբանանի մէջ առեւանգուած չորս իրանցի դիւանագէտներու պարագան:

Վարչապետը երեկ Ֆրանսայի, Շուէտի եւ Եւրոպական Միութեան դեսպաններուն հետ քննարկեց Լիբանան - Ե. Միութիւն յարաբերութիւններն ու անոնց գործընկերութեան համաձայնագրին շուրջ բանակցութիւններու ընթացքը:

Տեսակցութեան ետք Ֆրանսայի դեսպան Ֆիլիպ Լը Քուրթիէ հաստատեց, թէ 2000 տարին անկիւնադարձ մըն էր Լիբանանի եւ Եւրոպական Միութեան հետ անոր քաղաքական եւ տնտեսական գործակցութեան համար, եւ Միութիւնը վճռած է շարունակել այս յառաջդիմութիւնը:

## ՀՆՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՍԱՐՆԵՐՈՒ ՍՍԵՈՒՄՆԵՐՈՒՆ ԳԾՈՎ՝ ՎԵՌՈՆԵՐ

Քրէական հարցերու Պէյրութի ատենար, կոր կը գլխաւորէ դատարար Ժորժ Դանթու, երեկ տուաւ իր վճիռը հնութեան վարչութեան մէջ պետական գումարներու միջոցառման անօրինակութեամբ:

Ատենար վարչութեան նախկին ընդհանուր տնօրէն Քամիլ Ասմարը դատաւարուեց եօթը տարուան բանտարկութեան, Մոհամէտ Ռիֆահիի՝ վեց տարուան, Տանիէլ Ասմարը՝ երկու տարուան, Անթուան ԸԺէյլն ու Եագուպ Սըմահա՛ն երկուքով տարուան: Վճիռը նաեւ դատաւար տեսչներէն պահանջեց միասնաբար վեց միլիառ լ. ոսկիի հատուցում վճարել պետութեան:

Մանուէլ Ասմար եւ Թուֆիք Սալիպա ի բացակայութեան դատաւարուեցան չորս տարուան բանտարկութեան եւ երեք միլիոն լ. ոսկիից տուգանքի: Տուգանքներու գծով Քամիլ Ասմար դատաւարուեցաւ վճարելու հինգ միլիոն լ. ոսկի, Ռիֆահի՛ չորս միլիոն, Եագուպ Սըմահա՛ն՝ երկու միլիոն, ԸԺէյլ՝ մեկուկէս միլիոն, իսկ Տանիէլ Ասմար՝ մէկ միլիոն: Ասկի:

### ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՎԵՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԵՐՈՒՄ

ՊԱՐԱՐՈՒԵԱՍԻ ՅԱՆՁՆԱՄՈՒՄ

Ընդամառութեամբ

**ԳԵՐՇ. Տ. ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ**  
(Բարեգան առաջնորդ Հայոց Բեթիոյ թմի)

Ելոյք կ'ունենայ

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ՍԱՐԿԱՐՊՈՍ» ՊԱՐԱՆՈՒՄԸ**

Գեղարուեստական ղեկավար՝

**ՅՈՎ ՀԱՆՆԷՍ ԽԱՉԻԿԵԱՆ**

Շաբաթ եւ Կիրակի, 23 եւ 24 Դեկտեմբեր 2000, Երեկոյեան ժամը 9:00ից, Արթուրոս Մշակութային Միութեան «Ձ. Գաբրիէլեան» սրահը, **Վիլլաներ - Շաբաթ:**

### ՄԱՀԱՉԴ

Տիար Գեղամ Սիսեան  
Տէր եւ տիկին Պերճ եւ Սիլվան Սիսեան եւ զաւակները՝ Վահիկ եւ Նուռ Անի

Տէր եւ տիկին Հրաչ եւ Էլիզապէթ Սիսեան եւ զաւակները՝ Կարինէ, Արամ եւ Նայրի

Տէր եւ տիկին Արա եւ Վերա Սիսեան եւ զաւակը՝ Վարազ

Տէր եւ տիկին Յարութի եւ Զեփիլոն Պազգալեան եւ զաւակը՝ Կարէն

Տէր եւ տիկին Միշէլ եւ Լիլի Թամէր եւ զաւակները՝ Քիմ եւ Լիլ

Սիսեան ընտանիք  
Խաչատուրեան ընտանիք  
Սանոսեան ընտանիք  
Սիսեան ընտանիք  
եւ համայն ազգականներ կը գովեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝

#### ԱԼԻՍ ՍԻՍԵՆԵԱՆԻ (ՕՃԵԱՂ՝ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 18 Դեկտեմբեր 2000ին, Փարիզ:

Յուզարկաւորութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 22 Դեկտեմբեր, առաւօտեան ժամը 10:30ին, Փարիզի Ս. Յովհաննէս - Սկրտիլ մարտի տաճարին մէջ, 15 rue Jean Goujon 75008, Paris, որմէ ետք հանգուցեալին մարմինը պիտի ամփոփուի Cimetière des Batignolles, Porte de Clichy գերեզմանատան մէջ:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահալի:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին Պերճ եւ Սիլվան Սիսեաններուն բնակարանը, Փարիզ, Չորեքշաբթի 20 եւ Հինգշաբթի, 21 Դեկտեմբեր 2000ին, Հրաչ եւ Էլիզապէթ Սիսեաններուն բնակարանը, Փարիզ, Ուրբաթ 22 եւ Շաբաթ, 23 Դեկտեմբերին, ինչպէս նաեւ Արա եւ Վերա Սիսեաններուն բնակարանը, Մրպիլ, Լիբանան, Հինգշաբթի 4 եւ Ուրբաթ, 5 Յունուար 2001ին:

### ՍՈՒՐԵ ԾՆՈՒՆԴ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԹԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ ԺԵՅԹԱՈՒԻ

- **ԿԻՐԱԿԻ, 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2000**  
ՃՐԱԳԱՆՈՅՑ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏԵԱՆՆ ՄԵՐՈՅ Յիսուսի Քրիստոսի  
Ժամը 17:00ին՝ Երեկոյեան ժամ, ընթերցում մարգարէական թղթոց:  
Ժամը 18:00ին՝ Ճրագալոյցի Ս. պատարագ, Նախատօնակ:  
Ժամը 24:00ին՝ կէս գիշերի Ս. պատարագ:

- **ԵՐԱՎՈՒՅԱԹԻ, 25 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2000**  
Ս. ԾՆՈՒՆԴ ՏԵԱՆՆ ՄԵՐՈՅ Յիսուսի Քրիստոսի  
Պատարագները կ'իրակի օրերուն պէս:  
Ժամը 10:00ին՝ հայրապետական Ս. պատարագ եւ քարոյ

**ԱՄԵՆԱՊԱՏԻ ՏԵՐ ՆԵՐՍԷՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ.Ի**  
(Կաթողիկոս - պատրիարք կաթողիկէ հայոց)  
Յաւարտ Ս. պատարագի, Աշահամբոյր:

- **ԵՐԱՎՈՒՅԱԹԻ, 1 ՅՈՒՆԻՍԱՐ 2001**  
Տօն տնօրէնութեան եւ Անուանակոչութեան ՏԵԱՆՆ ՄԵՐՈՅ Յիսուսի Քրիստոսի  
Պատարագները կ'իրակի օրերուն պէս:  
Ժամը 10:00ին՝ հանդիսարար Ս. պատարագ:
- **ՇԱԲԱԹ, 6 ՅՈՒՆԻՍԱՐ 2001**  
Ատուածայայտութիւն եւ Մկրտութիւն ՏԵԱՆՆ ՄԵՐՈՅ Յիսուսի Քրիստոսի  
Ժամը 10:00ին կը պատարագէ եւ կը քարոյէ

**ԱՐԿԻ. ՀԱՅՐ ՎԱՐՈՒՆ ԵՊՍ. ԱԶԳԱՐԵԱՆ**  
(Ընդհանուր փոխանորդ Պէյրութի թեմին)  
Ապա Ջորժինէք եւ Մկրտութիւն ՏԵԱՆՆ:

Սրբապան երգեցողութիւնները կը կատարէ «Կիլիկիա» երգչախումբը:

### Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ

#### ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՊՈՒՐՑ ՀԱՍՈՒՏ

Կը հրաւիրէ իր հաւատացեալներն ու բարեկամները մասնակցելու ողջերթի Հայրապետական Ս. պատարագին, կոր պիտի մատուցանէ՝

**ԱՐԿԻ. Տ. ՄԱՆՈՒԷԼ ԵՊՍ. ՊԱԹԱԳԵԱՆ**  
(Նախկին պատրիարքական փոխանորդ եւ Պէյրութի թեմի առաջնորդ, սորընտիր առաջնորդ Միացեալ Նահանգներու եւ Քանաւայի թեմի կաթողիկէ հայոց)  
Երկուշաբթի, 25 Դեկտեմբեր 2000, առաւօտեան ժամը 10:00ին:  
Յետ Ս. պատարագին՝ շնորհաւորութիւններ եւ աշահամբոյր Հ. Կ. Մ. Ի սրահին մէջ:

#### ԱՐՅԱՆԻ ՕԺԱՆՂԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻՆ

- Սօսի Ուրֆայեանի մահուան առիթով, տէր եւ տիկին Բենիամին Պչաքճեան 50,000 լ.ո.:

#### «ԱՉՂԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

- Սօսի Ուրֆայեանի մահուան առիթով, տէր եւ տիկին Կարապիս Գուլումճեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Յակոբ Սահակեան 50,000 լ.ո., տէր եւ տիկին Բագրատ Վարդանեան 50,000 լ.ո.:

### ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՏԱՐՈՒՄ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԻ ԱՌԻՈՈՎ

## « ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ »

### Ամանորի ուրախ հանդէս

նոր ձեւ կը սպասեն

- Չիւնաթոյրը եւ Եօթը Թօյուկները
- Փինոքիոն եւ Քաջ Նապարը
- Կարմիր Գլխարկիկը

եւ ուրիշ շատ շատ հերոսներ

Նոր Տարուան մաղթանքներ կ'ուղղէ ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ Ինչպէս նաեւ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

«ԿԱՐԿԱՉ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱՆՈՒՄԸ  
«ԱՐԵԳ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱՆՈՒՄԸ  
«ԳԱՅԻԱՆԷ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՊԱՐԱՆՈՒՄԸ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 23 Դեկտեմբերէն սկսեալ, կէսօրէ ետք ժամը 5:30ին, «Յ. Տէր Միքոնեան» թատերասրահին մէջ:  
Տոմսերը ստանալ ՕBELIX Անթիլիաս. Համազգայինի գրախանութէն «Շաղկոյեան» կեդրոն եւ GEKAԷՆ Պոլս Վանուս:  
**ՓՆԵԹՕ.** - 23, 24 եւ 25 Դեկտեմբերի տոմսերը սպառած են:  
● 29, 30 Դեկտեմբեր եւ 1 Յունուար 2001ի ելոյթներու տոմսերը ստանալ վերոյիշեալ վայրերէն եւ կիշէն:

### ՃԱՓՈՆԻ ԴԻԲԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՊԵՏԸ ՄՈՍԿՈՒԱ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ

ՄՈՍԿՈՒԱ, 21 (ՌՈՅԹԸՐԶ).- Ճափոնի արտաքին գործոց նախարար Ետեյի Քոնո Յունուար 16-ին 17 Մոսկովա պիտի այցելի իր ռուս պաշտօնակիցին՝ Իկոր Իվանովի հետ բանակցություններու համար, յայտնած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը Հինգշաբթի օր:

Ճափոնական լրատու աղբիւրները հաղորդած են, թէ այցելութիւնը պիտի նպաստէ Ռուսիոյ նախագահ վլատիմիր Փութինի եւ Ճափոնի վարչապետ Եոշիւրո Մորիի միջեւ ռուսական Իրքուցք քաղաքին մէջ նախատեսուած վեհաժողովին պատրաստութեան:

Երկու երկիրներու ղեկավարները 1997ին որոշած էին իրենց միջեւ գոյութիւն ունեցող հողային հարց մը լուծել եւ մինչեւ 2000ի աւարտ խաղաղութեան համաձայնագիր մը կնքել: Սակայն Սեպտեմբերին Ճափոն պաշտօնական այցելութեան մը ընթացքին, Փութին եւ Մորի չէին կրցած իրենց տարակարծութիւնները լուծել, ինչ կը վերաբերի չորս կողմերու Ճափոնի վերադարձի հարցին:

Փութին իր հիւրընկալները յուսախաբ ըրած էր՝ յայտնելով, որ Մոսկովա ժամկէտը «ժայռի մը վետեռնաւած թիրախ» չի նկատեր, այլ՝ առաջադրանք մը:

### ՔԼԻՆԹԸՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅ...

Շարունակուած Ա. ԷջԷԸ  
ՔԼԻՆԹԸՆ - ՄՈՒՊԱՐԱՔ  
ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Բիլքլորն երէկ հեռաձայնային հաղորդակցութեան մը ընթացքին Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուսարաֆի հետ քննարկեց Ուաշինկթընի մէջ կատարուող պաղեստինեւիստայեան բանակցութիւնները:

ՄԵՐԵՅ Կուսակցութիւնը երէկ երեկոյեան որոշեց վարչապետ չկանգնել Շիւնն Փերեսի թեկնածութեան վարչապետի ընտրութիւններուն:

### ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՅԻ

ՉԱԼՔԱ, Հեռ. 04/710735-6-7  
Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի Ս. Ծննդեան տօնին առիթով՝ Չայնաւոր Ս. պատարագ պիտի մատուցանէ եւ աւուր պատշաճի քարոզէ:

### ԱՐՀ. Հ. ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

Երկուշաբթի, 25 Դեկտեմբեր 2000, առաւօտեան ժամը 10:30ին:  
Շրջանի բոլոր հաւատացեալները հրաւիրուած են մասնակցելու սոյն հոգեպարար արարողութեան:

**al-mashrek**  
INSURANCE & REINSURANCE S.A.L.  
Պուրճ Համուտի մասնաճիւղի հեռաձայնի թիւերն են.  
(01)258228 - (01)268808  
Fax: (01) 258223

**ԱՅՏՐԻԼ**  
ՀԻՒԱՆԴԱՆՈՅԱՅԻՆ  
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

**ԾԱՌԱՅԵԼԸ ՄԵՐ ՄԿԶԲՈՒՆՔՆ Է**  
1500 ԱՆԴԱՄ  
100000\$-ի ՀԻՒԱՆԴԱՆՈՅԱՅԻՆ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ  
90 ՀԻՒԱՆԴԱՆՈՅՆԵՐ  
76 ՏԱՐՐԱԼՈՒԹԱՐԱՆԱՅԻՆ ԿԵԴՐՈՆՆԵՐ  
ԱՅՏՐԻԼ - ԱՅՏԻՏ ԶԵՆԸ, Բ. ՅԱՐԿ ԸՆԴ, 01/262231 - 01/242556-7

### ԹՈՒՐԲԻԱ ՉԱԽԱԿՈՂՄԵԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐ ՎԵՐՋ ԿՈՒ ՏԱՆ ԸՄԲՈՍՏՈՒԹԵԱՆ

ՊՈԼԻՍ, 21 (ՌՈՅԹԸՐԶ).- Արեւմտեան Թուրքիոյ Չանաքքայէ բանտին մէջ, ձախակողմեան բանտարկեալներ Հինգշաբթի օր վերջ տուած են պաշտօնական ուժերուն դէմ իրենց ընդդիմադրութեան:

Ըստ ներքին գործոց նախարարութեան մէկ պաշտօնատարին, պաշտօնական ուժերը վերագրուած են Չանաքքայէ, ուր 140 բանտարկեալ կը մնար՝ 18 արգելափակուած էր ու անաւտուութեան էր:

Պաշտօնատարին համաձայն, Հինգշաբթի օր Պոլսոյ Ումրա-նիյէ բանտին պաշարունը կը շարունակուէր: Բանտին մէջ 400 բանտարկեալներ կը դիմադրէին պաշտօնական ուժերուն:

Այդ ուժերը Երեքշաբթի օր յարձակած էին 20 բանտերու վրայ, վերջ տալու համար հաւաքական հացադուլներու՝ իբրեւ բողոք բանտային բարեկարգումներու ծրագիրներուն դէմ: Երեքշաբթի օրուին է ի վեր տնուապէս 21 կողեր, որոնց աւելի քան 17՝ բանտարկեալներ, արձանագրուած են:

Ըստ թուրք պաշտօնատարներու, բանտարկեալներուն մեծամասնութիւնը մահացած է՝ ինքզինք այրելով:  
Մարդկային իրաւանց պաշտպան խմբակներ կը մերժեն այդ բացատրութիւնը, ինչպէս նաեւ բանտարկեալներուն մօտ

### ՄՈՒՍՏԻՍ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՉԻ ԿՐՆԱՐ ՆԱԽԱԳԱՅ ՄԸ ԸՆՏՐԵԼ

ՉԻՍԻՆԱՌԻ, 21 (ՌՈՅԹԸՐԶ).- Մոլտաւիոյ խորհրդարանը Հինգշաբթի օր չորրորդ անգամ ըլլալով ձախողած է նախագահ մը ընտրել, խորհրդարանին մէջ կեդրոնիւ աջ մեծամասնութեան կողմէ ընտրութիւնը պոլշոթի ենթարկելէ ետք՝ համայնավար թեկնածուի մը ընտրութիւնը խափանելու համար:  
101 արժոք հաշուող խորհրդարանը, որ այս տարեկիցին սահմանադրութիւնը բարեփոխած էր եւ նախագահական ուղղակի ընտրութիւնները

գտնուող վէսքերուն մասին տեղեկութիւնները, յայտնելով, թէ պոլսեան թիւր շատ աւելի բարձր է:

Արդարութեան նախարար Հիքմէթ Սամի Թուրք ըսած է, թէ գործողութիւնը, որուն նպատակը 2 ամսուան հացադուլներուն վերջ տալ էր քառասուն վիճակ ներկայացնող բանտերուն մէջ պետութեան հակակշիռ վերահաստատել էր, այնպիսի ձեռնարկ ծրագրուած է, որ հաւանական գոհեղութիւնը նուազագոյն ըլլայ:

Բրտութիւնները մտահոգութեանց դուրս բացած են Եւրոպական Միութեան մօտ,

որուն կ'ուզէ միանալ Թուրքիա, եւ Թուրքիոյ եւ Եւրոպական քաղաքներու տարածքին միջեւ են մարդիկ ցուցերու դիմելու:

Քիրտ 50 ցուցարարներ Չորեքշաբթի օր Լոնտոնի մէջ գրաւած էին աշխարհի ամէնէն բարձր դարձող անիւր եւ սպառնալով իրենք վիրէնք այրել, սակայն 5 ժամ ետք անոնք ոստիկանութեան անձնատուր եղած են ու ձերբակալուած ոստիկանութեան կողմէ:

Անոնք ուզած են մարդոց ուշադրութիւնը կեդրոնացնել Թուրքիոյ մէջ քիրտ բանտարկեալներու վիճակին վրայ:

### Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՇԱԽԻՍԱԿՈՐ ՊԱՏԱՐԱԳ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ

Կիրակի, 24 Դեկտեմբերին, Ս. Ստեփանոս Նախասարկաւագի եւ Սարկաւագ տօնին առիթով, հանդիսարար սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

Պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ՝  
ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ  
Սկիզբ ժամերգութեան՝ ժամը 8:00  
Ս. Պատարագ՝ ժամը 10:00  
Քարոզ՝ ժամը 11:00

Պատարագէն ետք Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ, միաբանութեան անդամներուն հետ, վեհարանի դահլիճին մէջ պիտի ընդունի սարկաւագները եւ իր հայրական պատգամը պիտի տայ:

Երեկոյեան ժամը 5:00ին, Անթիլիասի Մայր տաճարին մէջ տեղի պիտի ունենայ Ս. Ստեփանոսի նախատօնակը: Ժամերգութեան ետք վեհափառին նախագահութեամբ եւ միաբանութեան ներկայութեամբ վեհարանի դահլիճին մէջ տեղի պիտի ունենայ դասախօսական եւ գեղարուեստական ելոյթ մը՝ նուիրուած Ս. Ստեփանոսին:

Սիրով կը հրաւիրուին հաւատացեալները ներկայ գտնուելու եկեղեցական արարողութեանց եւ ներշնչուելու Ս. Ստեփանոսի նախատօնակին խորհուրդով:

ԴԻՒԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

### ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ

- MEC 14" TV at 133\$  
Remote control 100 channels  
Multisystem Double speakers
- MEC 21" TV at 222\$
- MEC 29" TV at 555\$  
with teletext
- Free TV table with the MEC 29"

Պուրճ Համուտ, Քաղաքապետարանի հրապարակ, 2րդ մուտք, Սանթրո Պլանքոյէն: Կառատունը ապահովուած: Հեռ. 01-241000:

### ԹՈՒՐԲԻԱ ԱՍՈՐԻ ԿԴԵՐԱԿԱՆ ՄԸ ԿԸ ԴԱՏՈՒԻ

ՏԻՍԸՊԵՏԻՐ, 21 (ՌՈՅԹԸՐԶ).- Թրքական ատեանի մը մէջ Հինգշաբթի օր սկսած է դատավարութիւնը ասորի կղերականի մը, որ ամբաստանուած է «ատելութիւն հրահրելու» յանցանքով, թերթերու յայտնելով, թէ քրիստոնէայ փոքրամասնութիւն կազմող իր համայնքը թուրքերու կողմէ ցեղասպանութեան կոտորած է:

Տարաբնուան պետական ապահովութեան ատեանին մէջ ակնատեաններ յայտնած են, թէ հայր Եւսուֆ Աքպուլոթի հերքած է իր դէմ ուղղուած ամբաստանութիւնը: Ան եթէ յանցարար նկատուի մէկէն երեք տարուան բանտարկութեան կրնայ ենթարկուիլ:  
Այս տարեկիցին արձակուած է, թէ թուրքերը 20րդ դարու սկիզբը, հարաւարեւելեան գօտիին մէջ, սիւրբեմաթիք կերպով ասորիներ սպանած են:

Աքպուլոթի այս արտայայտութիւնները ունեցած էր Մ. Նահանգներու Քոնկրէսի մէկ յանձնախումբին կողմէ որդեգրուած էր քանակական մը, որ Օսմանեան կայսրութեան վերջին օրերուն հայերու սպանութիւնը Յեղասպանութիւն կը նկատէր:


«Կը խօսէի թրքալիցիներու հետ, որոնք չէին արձանագրեր ըսածներ: Ես իմ անձնական կարծիքս չէի տար, այլ կը կրկնէի ինչ որ եկեղեցիին մէջ իմ երէցներս եւ անոնք՝ որոնք այցելութեան կու գային, կ'ըսէին: Չօրսկից չեմ կանգնիր Հայկական Ցեղասպանութեան քանակական, եւ չեմ ընդունիր իմ դէմ ուղղուած ամբաստանութիւնները», յայտնած է Աքպուլոթի ատեանին:

Նիսար, որուն ներկայ գտնուած են արեւմուտքի շարք մը դիւանագետներ, Փետրուար 22ին յետաձգուած է:

**ԽՈՍԱՆ ԳԻՇԵՐԸ - ՌԵԿԵՅՈՆ  
ՃԱՇԿԵՐՈՅՑ - ՊԱՐԱՇԱՆԴԵՍ**  
Կ'երգէ՝  
ԱՐԱՐԱՏ ԱՇԱՐՈՆԵԱՆ  
ԸՆԿերակցութեամբ՝  
ՇԱՆԹ ՏԻՇՉԵԼԵՆԵԱՆԻ  
Եւ իր նուագախումբին  
Մասնակցութեամբ՝  
ՊՈՒՀՈՒՔԻՍԹ ԹՈՐՈՍԻ  
24 Դեկտեմբեր 2000, «ԱԹԼԱՍ ՓԼԱՉԱ»  
Ճաշարանին մէջ, ժամը 9:00էն սկսեալ:  
● Անակնկալներ ● Քոթիյոն  
● Տեղեր ապահովելու համար հեռաձայնել  
03-297107 թիւին:

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ ՎԱՆԱՅ ՉԱՅՆ  
Այսօր՝ Ուրբաթ, 22 Դեկտեմբեր, ժամը 12:30ի յուրերէն ետք կրնաք ունկնդրել հարցալրոյց մը՝ Համալսարանի Լիբրարանի Շրջանային վարչարարութեան ներկայացուցիչ՝ ՊԵՏԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆԻ  
Բեմադրիչ՝ ՎԻԳԵՆ ՍՏԵՓԱՆԵԱՆԻ  
Պարուսոյց՝ ՖԵԼԻՔՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ  
Եւ խմբավար՝ ՉԱԼՔԱՐ ՔԵՇԵՇԵԱՆԻ հետ

**ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱՅ Է**  
Ը. Յ. Դ.  
Լիբանանի Երիտասարդական Միութիւն  
2001  
ՊԱՏԻ ՕՐԱՅՈՅՅՆԵՐԸ  
ՍԱԿ՝ 10,000 Լ. Ո.

**ՄԱՍԹԵՐ ՄՈՒ**  
  
**MASTER ALL**  
supermarket  
**ԳՆՈՒՄԴ ԿԱՏԱՐԷ՝ ՍՈՒՓԵՐՄԱՐԷԹ ՄԱՍԹԵՐ ՄՈՒԼԵՆ**  
**ԱՄԷՆ ՕՐ ԹԱՐՄ ԵՒ ԸՆՏԻՐ ՄՍԵՂԷՆՆԵՐՈՒ ԱՅԼԱԶԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ, ՆՈՒԱԶԱԳՈՅՆ ՍԱԿԵՐՈՎ:**









# ՕՐԱՏԵՐ

## ՀԱՐԺԱՊԱՏԿԵՐ

## ԸՆՈՒՏԵՍԻԼ



# ՄՓԻԻՌ-ԲԱԶԱՅ

## ՏԱՂԱՆԴԱԻՈՐ

Շարունակուած՝ 5րդ էջէն

չունի, հետեւեալը մեր երաժշտութիւնը աղաւաղուած դրուածքներ մէջ է»:

